

STANDING AND AD-HOC COMMITTEES OF THE RA NATIONAL ASSEMBLY
AS PARLIAMENTARY BODIES

H. H. Hakobyan

The article is devoted to the standing and ad-hoc committees in the National Assembly of the Republic of Armenia. It is mentioned that they are important parliamentary bodies, which have constitutional and legal status and significant role in the implementation of state legislative power. Through historical and comparative method of analysis, the author presents the parliamentary bodies of other states and their relationships and interaction mechanisms with other state institutions and public organizations.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

*Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ ռեկտոր*

Իրավունքի տեսության մեջ «իրավունքի աղբյուր» հասկացությունն ուսումնասիրվում է մի քանի տեսանկյուններից: Ռացիոնալիստական իրավափիլիսոփայական ուսմունքի շրջանակում դիտարկվում են ընդհանրապես իրավունքի և, մասնավորապես, առանձին իրավական ինստիտուտների ծագումը պայմանավորող օբյեկտիվ պատճառները՝ նյութական (իրավունքի մատերիալիստական ըմբռնման տեսանկյունից) և գաղափարական (իրավական իդեալիզմի դիրքերից) գործոնները: Նորմատիվիստական ուսմունքն ընդունում է «իրավունքի աղբյուր» հասկացության իրավաբանական նշանակությունը՝ ելակետ ընդունելով իրավական նորմի բովանդակության դրսևորման արտաքին ձևը¹: Իրավունքն արժեք է, որը դրսևորվում է որոշակի ձևերով²: Ձևական-իրավաբանական տեսանկյունից իրավունքի աղբյուր են իրավաստեղծ մարմինների կողմից կամ հանրաքվեի ճանապարհով ընդունված ակտերը՝ Սահմանադրությունը, օրենքները, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, որոնք պաշտոնապես ամրագրում են իրավական նորմերի բովանդակությունը կամ հանդիսանում իրավանորմերի արտահայտման պարտադիր, պաշտոնական ձև³: Հենց այս տեսանկյունից քննարկենք սահմանադրական

¹ Տե՛ս *Поляков А. В.* Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. Курс лекций, СПб., 2004, с. 648.

² Տե՛ս *Խաչատրյան Ս. Ա.* Իրավունքի արժեքավոր հատկությունները (Աքսիոլոգիական հիմնահարցեր), Երևան, 2002; *Նույնի՝* Իրավունքի օրինաչափությունները, Երևան, 2003; *Նույնի՝* Իրավունքի էֆեկտիվությունը, Երևան, 2003:

³ Տե՛ս *Общая теория государства и права. Академический курс в 3-х томах, Отв. ред.*

պատասխանատվության ինստիտուտի դրսևորման իրավաբանական ձևերը կան օրենսդրական աղբյուրները: Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական պատասխանատվության հիմնական աղբյուրը Սահմանադրությունն է, սակայն անուղղակիորեն աղբյուր են ծառայում նաև բոլոր այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք՝

- ընդունվում են Սահմանադրության հիման վրա և ի կատարումն սահմանադրական դրույթների,

- հանդիսանում են սահմանադրական իրավունքի աղբյուր,

- բովանդակում են սահմանադրական պատասխանատվության ինստիտուտին վերաբերող նորմեր:

Այսպիսով, գտնում ենք, որ, Սահմանադրությունից և միջազգային իրավական ակտերից բացի, Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի օրենսդրական աղբյուրներ կարելի է համարել ՀՀ ընտրական օրենսգիրքը, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը, ՀՀ դատական օրենսգիրքը, Հանրաքվեի մասին, Տեղական հանրաքվեի մասին, Սահմանադրական դատարանի մասին, Կուսակցությունների մասին, Հասարակական կազմակերպությունների մասին, Հիմնադրամների մասին, Մարդու իրավունքների պաշտպանի մասին, Դատախազության մասին, Կենտրոնական բանկի մասին, Վերահսկիչ պալատի մասին, Տեղական ինքնակառավարման մասին, Քաղաքացիական ծառայության մասին, Համայնքային ծառայության մասին, Քաղաքացիության մասին, Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին, Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին ՀՀ օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը: ՀՀ ընտրական օրենսգիրքը (այսուհետ՝ ԸՕ) սահմանում է պետության, օրենսդրությամբ վերապահված իրենց լիազորությունների շրջանակում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և կենտրոնական ընտրական հանձնաժողով (այսուհետ՝ ԿԸՀ) կազմավորող մարմինների պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար: Մասնավորապես, սահմանվում է պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝

- կազմակերպելու և անցկացնելու ընտրությունները՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ,

- խթանելու Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացումը՝ մրցակցության և այլընտրանքի սկզբունքներով,

- ապահովելու ընտրությունների հրապարակայնությունը, վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությունն ընտրական հանձնաժողովների աշխատանքներին,

- կատարելու ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին,

- ապահովելու քաղաքացիների նախընտրական քարոզչության ազատ իրականացումը,

М. Н. Марченко, т. 2, М., 2002, с. 229; *Марченко М. Н.* Теория государства и права, М., 2002, с. 169-184.

● ընտրական իրավախախտումներ կատարած սուբյեկտներին օրենքով սահմանված հիմքերով և կարգով ենթարկելու պատասխանատվության⁴:

ԸՕ-ն նախատեսում է ընտրական իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների սահմանադրական պատասխանատվությունը, մասնավորապես, ընտրական հանձնաժողովների պոզիտիվ պատասխանատվությունը՝ ապահովելու քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը, լիազոր մարմինների պատասխանատվությունը՝ կազմավորելու ընտրական հանձնաժողովներ: ԸՕ-ի 85-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Նախագահի թեկնածուի գրանցումը կարող է ուժը կորցրած ճանաչվել, իսկ 82-րդ հոդվածի հիման վրա կարող է ընդհանրապես գրանցումը մերժվել: Քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուները նախընտրական քարոզչություն իրականացնում են ԸՕ-ի 22-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների հաշվառմամբ: ՀՀ քրեական օրենսգիրքը բովանդակում է այն ընտրական իրավախախտումների կազմերը, որոնց կատարման համար սուբյեկտները ենթակա են քրեական պատասխանատվության ու պատժի⁵: Սահմանադրաիրավական հարաբերությունների կարևոր սուբյեկտ է Ազգային ժողովը (այսուհետ՝ ԱԺ): Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ օրենքը (այսուհետ՝ Կանոնակարգ)⁶ Սահմանադրության հիման վրա սահմանում է ԱԺ-ի լիազորությունների իրականացման կարգը՝ 1-ին հոդվածի 1-ին մասում ամրագրելով սահմանադրական այն դրույթը, որ ՀՀ-ում օրենսդիր իշխանությունն իրականացնում է ԱԺ-ն: Դրանով իսկ սահմանվում է ԱԺ-ի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ սահմանված կարգով իրականացնելու պետության օրենսդիր իշխանությունը:

Սահմանադրության 75-րդ և Կանոնակարգի 47-րդ հոդվածների համաձայն՝ ԱԺ-ում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը: Այսինքն, ԱԺ պատգամավորները և կառավարությունը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն են կրում օրենսդրական նախաձեռնության իրավունքն իրականացնելու համար: Կանոնակարգը սահմանում է ԱԺ-ի, ԱԺ հանձնաժողովների, կառավարության, ԱԺ աշխատակազմի սահմանադրական պատասխանատվության հիմքերը: Մասնավորապես, Կանոնակարգի 51-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԱԺ-ն սահմանադրական պատասխանատվություն է կրում կառավարության կողմից անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը քննարկելու և հերթական նստաշրջանի երկու ամսվա ընթացքում որոշում կայացնելու համար: Սահմանադրության 75-րդ հոդվածի և Կանոնակարգի 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Համամիտ ենք Հ. Հ. Հակոբյանի հետ այն հար-

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2011/36 (839):

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, էջ 75-78:

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/ 12 (187), 12.04.02:

ցում, որ կառավարությանն իրավունք է վերապահված գերազանցել իր լիազորությունները. «միայն իր համար ընդունելի ուղղումներով» պահանջը կառավարությանը տալիս է առավելություն ԱԺ պատգամավորների նկատմամբ, թեև օրենքի ընդունումը ԱԺ-ի գործառույթն է⁷: Սահմանադրության 72-րդ և Կանոնակարգի 73-րդ հոդվածների համաձայն՝ ԱԺ-ն սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ ՀՀ Նախագահի վերադարձրած օրենքն առանց քվեարկության ընդգրկելու հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում ու քննարկելու արտահերթ: Կանոնակարգը սահմանում է ԱԺ-ի սահմանադրական պատասխանատվությունը՝ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու և հանրաքվեի դրվելիք օրենքի նախագծերի քննարկման (74-78-րդ հոդվածներ), պետական բյուջեի նախագծի քննարկման ու ընդունման, բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման (79-89-րդ հոդվածներ), միջազգային պայմանագրերի վավերացման մասին որոշումների ընդունման (93-րդ հոդված), ՀՀ Նախագահի հրաժարականի ընդունման և պաշտոնակա անելու (94-95-րդ հոդվածներ), ՀՀ Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին որոշման ընդունման (96-րդ հոդված), ուղերձներ և հայտարարություններ ընդունելու (104.1-րդ հոդված), հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշում կայացնելու (105.1-րդ հոդված), ՀՀ վարչատարածքային բաժանումը սահմանելու (108-րդ հոդված) և այլ առումներով: ՀՀ ԱԺ-ն և ՀՀ Նախագահը կրում են համատեղ սահմանադրական պատասխանատվություն ԱԺ-ում ՀՀ Նախագահի իրավասությանը վերապահված հարցերի, այն է՝ համաներում հայտարարելու (90-րդ հոդված), պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու (91-րդ հոդված) մասին առաջարկության ներկայացման, քննարկման ու լուծման հետ կապված:

ԱԺ-ն սահմանադրական պատասխանատվության ատյան է ոչ միայն ՀՀ Նախագահի, այլև այն պաշտոնատար անձանց համար, ուն ընտրում և նշանակում է: ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմք է կազմում նաև Հանրաքվեի մասին ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք)⁸, որի 2-րդ հոդվածն ամրագրում է հանրաքվեի անցկացման սկզբունքները և դրանով իսկ մի կողմից նախատեսում պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ հանրաքվեն անցկացնելու ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ մյուս կողմից սահմանում ՀՀ տասնութ տարին լրացած քաղաքացիների պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ մասնակցելու հանրաքվեին՝ մեկ ձայնի իրավունքով: Միաժամանակ, Օրենքը սահմանում է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիներ-

⁷ Տե՛ս **Հակոբյան Գ. Գ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 557:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2001/32 (164), 18.10.01:

րի համար՝ վերջիններիս զրկելով հանրաքվեին մասնակցելու իրավունքից (3-րդ հոդվածի 3-րդ մաս): Օրենքն արգելում է հանրաքվեի անցկացում ՀՀ բնակչության ավելի քան մեկ երրորդն ընդգրկող տարածքում արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում, ինչպես նաև ՀՀ-ում արտակարգ կամ ռազմական դրությունը վերացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում: Օրենքում նախատեսված է ՀՀ Նախագահի և ԱԺ-ի սահմանադրական պատասխանատվությունը՝ Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու հարցով հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալու, ինչպես նաև ՀՀ Նախագահի պատասխանատվությունը՝ նշանակելու հանրաքվե (7-րդ հոդված), ԱԺ-ի և կառավարության պատասխանատվությունը՝ օրենքների ընդունման հարցով հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ հանդես գալու (8-րդ հոդված) առումներով:

Օրենքը նախատեսում է հանրաքվեի կենտրոնական, մարզային և տեղամասային հանձնաժողովների պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ սահմանված կարգով կազմակերպելու և անցկացնելու համաժողովրդական քվեարկություն (9-15-րդ հոդվածներ): Օրենքի 19-րդ հոդվածը նախատեսում է, որ հանրաքվեի նախապատրաստման ու անցկացման (ներառյալ՝ ցուցակները կազմելու) ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին և սահմանում ՀՀ կառավարության սահմանադրական պատասխանատվությունը՝ հանրաքվեի նախապատրաստելու և անցկացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները հանրաքվեի նշանակելուց հետո հնգօրյա ժամկետում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին տրամադրելու համար: Օրենքը սահմանում է.

- պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ երաշխավորելու հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչության ազատ իրականացումը,

- ՀՀ քաղաքացիների, կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների սահմանադրական պատասխանատվությունը՝ հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ օրենքով չարգելված ձևերով և միջոցներով քարոզչություն կատարելու,

- համայնքների ղեկավարների սահմանադրական պատասխանատվությունը՝ հանրաքվե անցկացնելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում հատկացնելու հատուկ տեղեր՝ քարոզչական պաստառները փակցնելու համար (20-րդ հոդված):

Օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ կետը սահմանում է, որ հանրաքվեի հանձնաժողովները հսկում են քարոզչության համար սահմանված կարգի պահպանումը: Դրա խախտման դեպքում հանձնաժողովները կարող են դիմել իրավասու մարմիններին՝ դրանք կանխելու, ինչպես նաև դատարան՝ քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար: Այսինքն՝ խոսքը գնում է նեգատիվ սահմանադրական և անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում՝ այլ իրավաբանական պատասխանատվության միջոցների կիրառման մասին: Նեգատիվ սահմանադրա-

կան պատասխանատվություն է կիրառվում նաև քարոզչության հիմնադրամում մուծումներ կատարելու իրավունք չունեցող սուբյեկտների կողմից ներդրումներ կատարելու և քարոզչությունը ֆինանսավորելու համար: Նրանց ներդրած գումարները փոխանցվում են պետական բյուջե: Քարոզչության ընթացքում արգելվում է հիմնադրամից դուրս միջոցներ ծախսելը: Օրենքը դիտորդի և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրում՝ 23-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրելով, որ դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները չեն կարող պատասխանատվության ենթարկվել հանրաքվեի ընթացքի, քվեարկության և արդյունքների ամփոփման վերաբերյալ իրենց հայտնած կարծիքի համար, դրանով իսկ անուղղակիորեն նեգատիվ սահմանադրական (անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում նաև՝ վարչական կամ քրեական) պատասխանատվություն է նախատեսվում դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների իրավունքները խախտած սուբյեկտների համար: Հանրաքվեի մասին օրենքի դրույթների խախտումն առաջացնում է ընտրական իրավունքի դեմ կատարված իրավախախտումների համար օրենքով սահմանված պատասխանատվություն: Տեղական հանրաքվեի մասին օրենքը⁹ սահմանում է տեղական հանրաքվեի մասնակիցների՝ համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի, տեղական հանրաքվեի հանձնաժողովների, դիտորդների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների և այլ մասնակիցների պոզիտիվ ու նեգատիվ սահմանադրական պատասխանատվության հիմքերը՝ համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեարկություն նախաձեռնելիս և անցկացնելիս:

ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմքի բաղկացուցիչ մաս է կազմում Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքը¹⁰: Սահմանադրական դատարանը (այսուհետ՝ ՍԴ) սահմանադրական իրավահարաբերությունների կարևոր սուբյեկտներից է՝ պետական իշխանության մարմինների նկատմամբ սահմանադրական պատասխանատվության միջոցներ կիրառող կամ այդ միջոցների կիրառման գործընթացում հանգուցային դերակատարություն ունեցող ինստիտուտ, սահմանադրական վերահսկողություն իրականացնող, ինչպես նաև պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն կրող մարմին: Օրենքը (3-րդ հոդված) բովանդակում է ՍԴ անդամին ներկայացվող պահանջները և, տարիքային, քաղաքացիության, կրթական, լեզվական և այլ ցենզերից բացի, նախատեսում է, որ «Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահը պետք է հաշվի առնեն նաև սահմանադրական դատարանի անդամի թեկնածուի բարոյական հատկանիշները»: Օրենքի այս իմպերատիվ պահանջը պատահական չէ և պայմանավորված է ՍԴ անդամի սահմանադրաիրավական կարգավիճակով, նրա բարձր կոչմամբ, կրած պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությամբ: Օրենքում «բարոյական հատկանիշների» պահանջն իրավաբանորեն

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/11 (186), 01.04.02:

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2006/32 (487), 21.06.06:

ամրագրելն անուղղակիորեն հավաստում է, որ «պոզիտիվ պատասխանատվություն» հասկացությունը բարոյական արժեքից կարող է վերաճել իրավական կատեգորիայի՝ պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության:

Որքան բարձր բարոյական հատկանիշներով օժտված լինի ՍԴ անդամը, այնքան արժանապատվորեն կկրի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը և չի դառնա նեգատիվ սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ: Օրենքը սահմանում է ՍԴ-ում առանձին գործերի քննության առանձնահատկությունները, բովանդակում ոչ միայն նյութական, այլև դատավարական բնույթի սահմանադրաիրավական նորմեր:

Յուրաքանչյուր ժողովրդավարական պետության քաղաքական համակարգի կարևոր սուբյեկտը կուսակցություններն են¹¹: ՀՀ-ում կուսակցությունների սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմքը ներառում է Կուսակցությունների մասին օրենքը¹², որը կարգավորում է կուսակցություններում միավորվելու իրավունքի իրականացման, կուսակցությունների ստեղծման, դրանց իրավական կարգավիճակի, գործունեության, վերակազմակերպման ու լուծարման հետ կապված հարաբերությունները: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ՀՀ զինված ուժերում, իրավապահ մարմիններում, նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում կուսակցությունների տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծումը և գործունեությունն օրենքով արգելվում են: Կուսակցությունները պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն են կրում՝

- պետական գրանցում ստանալու,
- իրենց գործունեությունը անդամության կամավորության, ինքնակառավարման, անդամների իրավահավասարության, օրինականության և հրապարակայնության սկզբունքներին համապատասխան իրականացնելու,
- իրենց հիմնադիր ու ծրագրային փաստաթղթերը համընդհանուր իրազեկման նպատակով հրապարակելու համար:

ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական աղբյուր է նաև Հասարակական կազմակերպությունների մասին օրենքը¹³, որը կարգավորում է ՀՀ-ում այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու՝ սահմանադրորեն ամրագրված իրավունքն իրականացնելիս ծագող իրավահարաբերությունները՝ կապված հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) ստեղծման, գործունեության, վերակազմակերպման ու լուծարման հետ: ՀԿ-ն պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ գործելու օրինականության, հրապարակայնության, անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, ինքնակառավարման, դե-

¹¹ Այդ մասին մանրամասն տես **Petrov V.** The Constitution, political parties and Constitutional systems // VII World Congress of the International Association of Constitutional Law, Athens, 11-15 June 2007.

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/ 34 (209), 15.08.02:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2001/ 42 (174), 27.12.01:

կավարման կոլեգիալության սկզբունքներին համապատասխան: ՀԿ-ն չի կարող ունենալ քաղաքական, կրոնական, արհեստակցական նպատակներ: ՀԿ-ի պետական գրանցումը մերժվում է, եթե ներկայացված կանոնադրությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին: Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետությունը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով ապահովելու ՀԿ-ի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ըստ Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի՝ անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունն ու նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն: ՀԿ-ի նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառող մարմինը դատարանն է: Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կազմակերպության հարկադիր լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ պետական լիազորված մարմնի պահանջով և միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»: Պետական լիազորված մարմինը կարող է կազմակերպությունը լուծարելու պահանջով դիմել դատարան, եթե՝

1) կազմակերպության գործունեությունն ուղղված է ՀՀ սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելուն, բռնություն և պատերազմ քարոզելուն,

2) կազմակերպությունը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,

3) կազմակերպության հիմնադիրը (հիմնադիրները) կամ լիազորված անձը կազմակերպությունը հիմնադրելիս թույլ են տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմքի բաղկացուցիչ մաս է կազմում նաև Հիմնադրամների մասին ՀՀ օրենքը¹⁴, որը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան, սահմանում է հիմնադրամների իրավական կարգավիճակը, կարգավորում դրանց ստեղծման, գործունեության իրականացման, վերակազմակերպման և լուծարման ընթացքում ծագող իրավահարաբերությունները: Ինչպես ՀԿ-ի, այնպես էլ հիմնադրամի նկատմամբ դատարանը կարող է կիրառել նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց՝ լուծարման ձևով:

Սահմանադրական կարևոր մարմին է Մարդու իրավունքների պաշտպանը, որը որպես անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ, պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության համար¹⁵:

Սահմանադրական պատասխանատվության հաջորդ սուբյեկտը արդարադատությունը իրականացնող մարմիններն են: Ըստ այդմ, դատարանների կազմավո-

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2003/ 9 (244), 12.02.03:

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր, 2003/ 58 (293), 26.11.03; 2006/34 (489), 28.06.06; 2008/28(618), 14.05.08:

րումը և գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը ևս ներառվում են ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական աղբյուրների մեջ: Այդ ակտերն են՝ ՀՀ քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության, դատական օրենսգրքերը¹⁶ և այլ ակտեր: Հիմնական օրենքի 91-րդ հոդվածի համաձայն՝ դատարանները պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն են կրում Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան արդարադատություն իրականացնելու համար: Դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը պարտավոր են դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորել: Իր հերթին դատավորը կարող է ենթարկվել նեգատիվ սահմանադրական պատասխանատվության Սահմանադրության 97-րդ և դատական օրենսգրքի 12-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝

- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու,
- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելու, գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի՝ այլ վճարովի աշխատանք կատարելու,
- որևէ կուսակցության անդամագրվելու,
- ընտրություններում իր թեկնածությունն առաջադրելու,
- նախընտրական քարոզչությանը մասնակցելու կամ ցանկացած այլ ձևով քաղաքական գործունեությամբ զբաղվելու դեպքերում:

Նշված հիմքերով ՀՀ Նախագահը՝ Արդարադատության խորհրդի առաջարկության հիման վրա, դադարեցնում է դատավորի լիազորությունները:

Դատական օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է դատավորի ապաքաղաքականացվածության սկզբունքը, ըստ որի դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Ինչպես սահմանդրաիրավական կարգավիճակ ունեցող մյուս սուբյեկտները՝ դատավորը նույնպես ստանձնում է դատավորի պաշտոն և, միաժամանակ, իր սահմանադրաիրավական կարգավիճակով պայմանավորված պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն՝ տալով երդում:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սահմանում է դատական օրենսգրքի 153-րդ հոդվածը, համաձայն որի՝ դատավորին քրեական, վարչական, քաղաքացիաիրավական կամ օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելը չի բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը և հակառակը: Կարծում ենք, որ դատավորի նկատմամբ կիրառվող իրավաբանական պատասխանատվության տեսակների շարքում պետք է նշել նաև սահմանադրական պատասխանատվությունը: Իր հերթին պետությունը կրում է պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն՝ ապահովելու դատավորի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունը:

¹⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր, 1998/ 20(53), 09.09.98; 1998/ 22 (55), 21.09.98; 2007/20 (544), 18.04.2007:

Սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է նաև դատախազությունը, և Դատախազության մասին օրենքը¹⁷ ևս կազմում է ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմքի բաղկացուցիչ մասը: Դատախազությունը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ կապված Սահմանադրության 103-րդ հոդվածում նախատեսված լիազորությունների իրականացման հետ: Դատախազները չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր դատախազ իր լիազորություններն իրականացնելիս ինքնուրույն է որոշումներ ընդունում՝ հիմնվելով օրենքների և ներքին համոզմունքի վրա և պատասխանատու է իր ընդունած որոշումների համար»: Օրենքի 5-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունից բխում է դատախազության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ իր իրականացրած գործունեության մասին տեղեկացնելու հանրությանը, այնքանով, որքանով դա չի հակասի մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությանը: Իսկ ՀՀ գլխավոր դատախազի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունն է՝ յուրաքանչյուր տարի ՀՀ ԱԺ-ին և ՀՀ Նախագահին ներկայացնելու հաղորդում դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

Սահմանադրական լուրջ լիազորություններով և, միաժամանակ, սահմանադրական պատասխանատվությամբ է օժտված ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ ԿԲ), որի գործունեության նորմատիվ իրավական հիմքը Սահմանադրությունն է, ինչպես նաև ՀՀ բանկային օրենսդրությունը: Մասնավորապես, Կենտրոնական բանկի մասին օրենքը¹⁸ սահմանում է ԿԲ-ի լիազորություններն ու պատասխանատվությունը՝ մաս կազմելով ՀՀ-ում սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմքի:

Սահմանադրական կարևոր մարմին է ՀՀ վերահսկիչ պալատը (այսուհետ՝ ՎՊ), որը սահմանադրական բարեփոխումների արդյունքում առանձնացել է ԱԺ-ից՝ վերածվելով ինքնուրույն մարմնի: Սահմանադրության 83.4-րդ հոդվածի համաձայն՝ ՎՊ-ն անկախ մարմին է, որը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում ֆինանսատնտեսական վերահսկողություն իրականացնելու համար: Վերահսկիչ պալատի մասին ՀՀ օրենքի¹⁹ 23-րդ հոդվածի համաձայն՝ ՎՊ-ի աշխատակիցները, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն են կրում ՎՊ-ի կողմից կատարվող վերահսկողության օրինականության եւ անաչառության, ինչպես նաև պետական, բանկային եւ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակման համար:

Սահմանադրության 83.4-րդ հոդվածի 3-րդ մասը պարտավորեցնում է

¹⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2007/19 (543), 11.04.07:

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, 1996/12, 02.07.1996:

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2007/ 3 (527), 12.01.07:

տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ ԱԺ-ին ներկայացնել ՎՊ-ի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

Պետական իշխանության մարմիններից բացի, սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ են նաև տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք կրում են թե՛ պոզիտիվ և թե՛ նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն: Տեղական ինքնակառավարման մասին օրենքը²⁰ սահմանում է տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Թեև ՀՀ Սահմանադրությունը չի անդրադառնում համայնքային կամ պետական ծառայությանը²¹, սակայն Քաղաքացիական ծառայության մասին, Համայնքային ծառայության մասին²², ինչպես նաև պետական ծառայության մյուս տեսակները կանոնակարգող օրենքները բովանդակում են սահմանափակումներ համայնքային, քաղաքացիական ծառայողների, պետական ծառայողների այլ կատեգորիաների համար, և այդ սահմանափակումները խախտողների նկատմամբ կարող են կիրառվել նեգատիվ պատասխանատվության միջոցներ՝ պաշտոնանկության, դասային աստիճանից զրկելու և այլ ձևերով:

Սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտներ են ՀՀ քաղաքացիները, ովքեր իրենց անհատական և կոլեկտիվ իրավունքներն իրականացնելիս հանդես են գալիս որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներ:

Ողջ աշխարհում մարդկանց սահմանադրական իրավունքների զանգվածային սահմանափակումները հնարավոր են այնպիսի ծանր ու բարդ իրավիճակներում, ինչպիսին արտակարգ և ռազմական դրությունն են²³: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: ՀՀ կառավարության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունն է՝

²⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/21(196), 21.06.02:

²¹ Տե՛ս **Եղյան Ռ.** Քաղաքացիական (պետական) ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003; **Եղյան Ռ., Օրդյան Է.** Համայնքային ծառայություն (իրավական ակտերի ժողովածու), ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Երևան, 2007:

²² Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր, 2002/1 (176), 09.01.02; 2005/7 (379), 26.01.05:

²³ Այդ մասին մանրամասն տե՛ս **Deskoska R.** Restrictions of human rights in Emergency situations; **Gardasevic D.** The Timing of an Emergency: the Issue of the Constitutional Moment? // VII World Congress of the International Association of Constitutional Law, Athens, 11-15 June 2007; տե՛ս նաև **Խաչատրյան Դ.** ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13, 14 մասերի մեկնաբանություն // ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 634-643:

ռազմական դրության հայտարարման պահից՝ հնգօրյա ժամկետում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ծանուցելու քաղաքացիների իրավունքների և ազատությունների այն սահմանափակումների մասին, որոնք շեղվում են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թ. միջազգային դաշնագրով ՉՅ ստանձնած պարտավորություններից: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը տեղեկացվում է նաև ռազմական դրության դադարեցման մասին: Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին ՉՅ օրենքը²⁴ և Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին ՉՅ օրենքը²⁵ սահմանում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, ինչպես նաև պաշտոնատար անձանց ու քաղաքացիների պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը բնակչության պաշտպանության բնագավառում՝ ռազմական դրության պայմաններում, արտակարգ իրավիճակներում:

Ժ. Ի. Յովսեփյանը գտնում է, որ արտակարգ իրավիճակի դեպքում սահմանադրական պատասխանատվության հիմքը՝ սահմանադրական անհամարժեքությունը, դրսևորվում է քաղաքական-իրավական հարաբերությունների մասնակիցների (սուբյեկտների) վարքագծի անհամապատասխանությամբ սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին, իշխանություն «վերցնելու» սահմանադրական ընթացակարգերին և իշխանության իրականացման ձևերին ու մեթոդներին: Արտակարգ իրավիճակի դեպքում առկա են սահմանադրական պատասխանատվության և՛ պոզիտիվ, և՛ նեգատիվ ասպեկտները, ինչպես նաև իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակները: Կարող են առկա լինել քրեական իրավախախտումների՝ հանցագործությունների հանցակազմեր՝ ուղղված կառավարման կարգի և իշխանության իրականացման սկզբունքների դեմ: Այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում հայտարարվում է արտակարգ իրավիճակ, ոչ միայն հանցագործությունների հանցակազմեր են, այլև քաղաքական գործընթացի մասնակիցների գործողությունների՝ Սահմանադրությանն անհամարժեքության ցուցանիշ: Արտակարգ իրավիճակի ռեժիմը կարող է հաստատվել նաև բնական ու տեխնաժիմ բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքով²⁶: Արտակարգ իրավիճակի ռեժիմի հայտարարման դեպքում կիրառվող միջոցառումները հասցեագրվում են ոչ թե սահմանադրական իրավահարաբերությունների կոնկրետ սուբյեկտին, այլ ունեն համընդհանուր հասցեագրում, տարածվում են սահմանադրաիրավական հարաբերությունների բոլոր մասնակիցների վրա՝ անկախ նրանից, թե վերջիններս հանդիսանում են արդյոք այն իրավախախտման սուբյեկտը, որը հանգեցրել է արտակարգ իրավիճակի, թե ոչ: Այսպես՝ սահմանափակվում է տեղաշարժի ազատությունը, արգելվում կամ սահմանափակվում են հանրահավաքների, ժողովների, երթերի, ցույցերի, գործադուլների անցկացումը, սահմանափակվում է մամուլի և զանգվա-

²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2007/4 (528), 17.01.07:

²⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 1998/33 (66), 31.12.98:

²⁶ Տե՛ս *Овсеян Ж. И.* Критерии конституционной ответственности, М., 2000.

ծային լրատվության մյուս միջոցների ազատությունը: Սակայն արտակարգ իրավիճակի պայմաններում հնարավոր է նաև նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառում այն սուբյեկտների նկատմամբ, ովքեր խախտել են արտակարգ իրավիճակի ռեժիմի կանոնները. օրինակ, կուսակցության գործունեության դադարեցում, այն անձի վտարում, ով խախտել է կանոնները և այդ տարածքի բնակիչ չի հանդիսանում և այլն:

ՀՀ բազմաթիվ այլ օրենքներ այս կամ այն կերպ նույնպես սահմանադրական պատասխանատվության օրենսդրական հիմքի մաս են կազմում: Օրինակ, Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքը²⁷ առաջին հայացքից որևէ առնչություն չունի սահմանադրական պատասխանատվության հետ, սակայն սահմանում է պետական իշխանության մարմինների՝ ԱԺ-ի, կառավարության, ֆինանսների նախարարության, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու պատասխանատվությունը՝ կապված պետական ու համայնքային բյուջեների նախագծերի կազմման, ներկայացման, հաստատման և կատարման, բյուջեի կատարման մասին հաշվետվության ներկայացման, բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ: Օրենքը նախատեսում է, որ բյուջեների կատարման կարգը սահմանում և բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է կառավարությունը՝ իր սահմանած կարգով: Պետական բյուջեից ֆինանսավորվող բոլոր սուբյեկտները սահմանադրական պատասխանատվություն են կրում բյուջետային միջոցների արդյունավետ, խնայողաբար և նպատակային օգտագործման համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ սահմանադրական պատասխանատվության հետ կապված հարաբերությունները ուղղակի կամ անուղղակի կերպով կարգավորվում են բոլոր այն օրենսդրական ակտերով, որոնք բովանդակում են սահմանադրական պատասխանատվության ինստիտուտին վերաբերող նորմեր:

²⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքներ, 1985-1997, Գիրք I, Երևան, 2007, էջ 789-823:

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ИСТОЧНИКИ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Р. Х. АКОПЯН

Статья посвящена законодательным источникам конституционной ответственности в Республике Армения. Анализируются избирательный кодекс, судебный кодекс РА, регламент Национального Собрания РА, законы о конституционном суде, об общественных организациях, политических партиях и фондах, о референдуме и местном референдуме, о гражданской и муниципальной службе, о защитнике прав человека, о прокуратуре, о центральном банке, о местном самоуправлении и другие нормативно-правовые акты РА в качестве законодательных источников института конституционной ответственности.

**THE LEGISLATIVE SOURCES OF THE CONSTITUTIONAL RESPONSIBILITY
IN THE REPUBLIC OF ARMENIA**

R. Kh. Hakobyan

The article is devoted to the legislative sources of the constitutional responsibility. The RA laws and other normative legal acts on the Electoral Code, the Judicial Code, the statute of the RA National Assembly, the Constitutional Court, non-government organizations, political parties and funds, the referendum and local referendum, civil and municipal service, the Ombudsman's and Prosecutor's Office, Central Bank and the local self-government are analyzed as legislative sources for the institute of the constitutional responsibility in the Republic of Armenia.

**ԽՈՍՐՈՎ ԵՐՐՈՐԴ ՄԵԾԻ ԵՎ ՏԻՐԻԴԱՏ ԵՐՐՈՐԴ ՄԵԾԻ
ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ
(քննությունն իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով)**

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր

Մեծ Հայաստանի Խոսրով Մեծ և նրա որդի Տիրիդատ Մեծ թագավորների թագավորման ժամանակի հարցը կարևոր է հայկական պետության և իրավունքի պատմության համար և շրջադարձային՝ հայ ազգի կյանքում: Այդ թագավորների անվան հետ է կապված Մեծ Հայաստանի վերջնական դուրս գալը իրանական միության (Ֆեդերացիայի կամ՝ կոնֆեդերացիայի) կազմից, որը հող ստեղծեց Արևմտյան քաղաքակրթությանը մերձենալու համար: Նրանցից Տիրիդատ Մեծ թագավորը, Գրիգոր Լուսավորչի հետ միասին, կազմակերպել է աշխարհում առաջին քրիստոնեական հեղափոխությունը, հիմնադրել մարդկության պատմության մեջ առաջին քրիստոնեական պետությունը:

Պատմության մեջ առաջին անգամ Մեծ Հայաստանում է, որ քրիստոնեական եկեղեցին և պետությունը իրենց սահմաններով սկսել են համընկնել, իսկ եկեղեց-